


ԱՂՐՈՒԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
 Հայաստանի ազգային ագրարային համալսարան
 AGRISCIENCE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական
պարբերական

ISSN 2579-2822



Կայքէջ՝ anau.am/hy/teghkekagir

ՀՏԴ 636.22/28.082

ՆԵՐԿՐՎԱԾ ՀՈԼԵՏԻՆ ՑԵՂԻ ՄԱՔՐԱՑԵՂ ԵՐԻՆՋՆԵՐԻ ԴՈՒՍՏՐԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ԿՈՎԵՐԻ ԿԱԹՆԱՅԻՆ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱԴՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ.Յ. Գիլոյան, Ա.Յ. Գրիգորյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Ն.Ա. Կասումյան

*Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն
garnikgiloyan1937@mail.ru*

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բանալի բառեր՝
*սերունդ,
 ցեղ,
 տնտեսական օգտակար
 հատկանիշ,
 լակտացիա,
 տարիք*

Ա Ս Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Հայաստանում անասնաբուծության կատարելագործման նպատակով առաջարկվում է օգտագործել Եվրոպայից ներկրված հոլշտին ցեղի երինջների դուստրերից ստացված երկրորդ սերնդի կենդանիներին:

2017-2018 թթ. Արզնու տոհմային ԹՏԽ-ում անցկացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ արոտամսուրային պահվածքի պայմաններում Գերմանիայից ներկրված մաքրացեղ երինջների դուստրերից ծնված երկրորդ սերնդի կովերը երրորդ ծնում կաթի քանակությամբ 305 օրում 1112 կգ-ով կամ 22,2 %-ով գերազանցել են ցեղի ստանդարտի պահանջները, ինչը վկայում է կլիմայավարժեցման բավարար ընթացքի, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիայով նախրի նորոգման համար ընտրված մատղաշի նպատակային աճեցման մասին:

Նախաբան

Տավարաբուծությունը հանրապետության գյուղատնտեսության առաջատար ճյուղերից է: Այն վարվում է բոլոր մարզերում՝ ներառելով գյուղական համայնքների ավելի քան 99 %-ը, տավարաբուծությամբ զբաղվող շուրջ 200 հազար գյուղացիական տնտեսություններ, այլ տնտեսավարողների: Այն նաև նպաստում է բնատնտեսական ռեսուրսների նպատակային օգտագործմանը, բնակչությանը կենդանական ծագման մթերքով ապահովելուն, գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման համար նախապայմաններ ստեղծելուն:

Քանի որ շուրջ 25 տարի ընդհատված են եղել տոհմային

աշխատանքների վերականգնումը և նախիրների որակական վերարտադրությունը, ներկայումս անհրաժեշտ է հատկապես սեղմ ժամկետներում ներդնել կովերի արհեստական սերմնավորման մեթոդը, բացառել անհայտ ծագմամբ ցուլերի օգտագործումը: Ստեղծված իրավիճակի կարգավորումը պահանջում է ներկրված ցեղերի օգտագործման արտադրատեխնոլոգիական խնդիրների համակողմանի լուծում: Ներկրված կենդանիներից ստացված ցուլիկները պետք է աճեցվեն արտադրողների կազմը համալրելու համար:

2016 թ. տվյալներով աշխարհում տավարի մսի արտադրությունը, ըստ կենդանի զանգվածի, կազմել է 67,9 մլն տոննա. նախատեսվում է 2026 թ. հասցնել 76,3 մլն

տոննայի: Մեկ շնչի հաշվով արտադրվել է 34,1 կգ միս. նախատեսվում է արտադրել 34,6 կգ (ֆիզիոլոգիական նորման 82 կգ է): Ընդհանուր մսի արտադրությունում տավարի մսի մասնաբաժինը կազմել է 21,7 %: Նախատեսվում է հասցնել 21,8 %-ի: Կաթի արտադրությունը 2016 թ. կազմել է 876 մլն տոննա. նախատեսվում է 2026 թ. հասցնել 960 մլն տոննայի:

Ի դեպ, 2016 թ. աշխարհում մեկ շնչի հաշվով արտադրվել է 111,1 կգ կաթ (ֆիզիոլոգիական նորման 415 կգ է): 2018 թ. աշխարհում 100 կգ կաթի միջին արժեքը կազմել է 35-37 ԱՄՆ դոլար:

Հայաստանի Հանրապետությունում մեկ կովի միջին կաթնատվությունը 2013 թ. կազմել է 2054 կգ, իսկ 2017-ին՝ 2260 կգ: 2017 թ. արտադրվել են 109,0 հազ. տոննա միս (ըստ սպանդային զանգվածի), 758,2 հազ. տոննա կաթ: Խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը 2017 թ. կազմել է 655,8 հազ. գլուխ, 2018-ին՝ 590,6 հազ. գլուխ, կովերի գլխաքանակը՝ համապատասխանաբար 296,0 և 266,8 հազ. գլուխ (Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018):

Ըստ ներկայացված տվյալների՝ ՀՀ-ում պետք է առաջնայնություն տրվի տավարաբուծության զարգացմանը: Ուստի անհրաժեշտ է տավարաբուծության խթանման նպատակով օգտագործել Հայաստանի Հանրապետությունում 2007-2015 թթ. տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակում եվրոպական երկրներից որպես գենետիկական ռեսուրս ներկրված շվից, հոլշտին և ֆլեկվի ցեղերի մաքրացել երինջների դուստրերից ստացված երկրորդ սերնդի կենդանիներին:

Նյութը և մեթոդները

Ուսումնասիրությունները 2017-2018 թթ. կատարվել են ՀՀ Կոտայքի մարզի «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ տնտեսությունում: Ընտրվել են 16 գլուխ առաջնածին, 20 գլուխ երկրորդ ծնի և 22 գլուխ երրորդ ծնի կովեր: Կաթնային մթերատվության տվյալները մշակվել են կենսաաչափական մեթոդով: Առաջնածին կովերի լակտացիայի 305 օրվա կերաբաժնի միջին սննդարարությունը կազմել է 12,1 կերամիավոր, 14,6 ՄՋ էներգետիկ կերամիավոր, 146 ՄՋ փոխանակային էներգիա, 1210 գ մար-

սելի պրոտեին, երկրորդ ծնի կովերինը՝ համապատասխանաբար 14,1, 17,0, 170, 1410, երրորդ ծնի կովերինը՝ 15,6, 18,6, 186,0, 1560: Կովերին տրվող կերաբաժնի ընդհանուր սննդարարության հաշվարկով առվույտի խոտը կազմել է 25 %, ծղոտը՝ 5 %, եգիպտացորենի սիլոսը՝ 30 %, արոտի կանաչը՝ 7 %, համակցված կերը՝ 33 %: Կովերի համալիր գնահատման (բոնիտավորման) տեղեկագրից վերցված ամփոփ տվյալները մշակվել են կենսաաչափական մեթոդով (E.K. Меркурьева, 1970):

Արդյունքները և վերլուծությունը

Կովերի կաթնային մթերատվության վրա ազդում են գենետիկական (ժառանգական) և ոչ գենետիկական (ոչ ժառանգական) գործոնները: Գենետիկական գործոններից են կենդանիների ցեղը, ցեղայնությունը և գենոտիպով պայմանավորված առանձնահատկությունները: Ոչ գենետիկական գործոնները պայմանավորված են կենդանիների ֆիզիոլոգիական վիճակով և արտաքին միջավայրով: Ֆիզիոլոգիական գործոններից են կենդանիների տարիքը, այդ թվում՝ առաջին ծնի տարիքը, հղիությունը, սերվիսի և կթվադադարի շրջանների տևողությունը, սեռական ցանկությունը (կտողուցք): Արտաքին միջավայրի կարևոր գործոններ են կենդանիների կերակրման սննդարարությունը և տիպը, պահվածքը, խնամքը, ծնի սեզոնը, կթի տեխնոլոգիան և այլն:

Աղյուսակ 1-ում ներկայացված առաջինից երրորդ ծինների կովերի կենդանի զանգվածի կենսաաչափական մշակման տվյալների վերլուծության համաձայն՝ առաջին ծնի կովերը ցեղի ստանդարտի 1-ին դասի (Инструкция по бонитировке крупного рогатого скота молочных и молочно-мясных пород, 1990) պահանջը գերազանցում են 151,5 կգ-ով կամ 31,6 %-ով, երկրորդ և երրորդ ծինների կովերը՝ համապատասխանաբար 158,7 կգ-ով կամ 30,5 %-ով, 133,1 կգ-ով կամ 24,2 %-ով: Կենդանի զանգվածի տարիքային փոփոխությունը ևս օրինաչափ է. նշանակում է նորագույն տեխնոլոգիայով աճեցնելու դեպքում նորոգման մատուցվող լիովին կլիմայավարժեցվում է, կովերն ապահովում են ցեղին բնորոշ կենդանի զանգված և դրսևորում լավագույն ժառանգական հատկանիշներ:

Աղյուսակ 1. Հոլշտին ցեղի կովերի կենդանի զանգվածն ըստ լակտացիաների

Ծիներ	Ցուցանիշները					Ցեղի ստանդարտի 1-ին դասի պահանջները
	n	Lim	M ± m	σ	Cv	
1-ին ծին	16	497...665	631,5±11,0	44,0	7,0	480
2-րդ ծին	20	530...893	678,7±23,9	106,9	15,75	520
3-րդ ծին	22	605...810	683,1±11,23	52,68	7,7	550

Աղյուսակ 2. Հոլշտին ցեղի կովերի կաթնային մթերատվությունն ըստ լակտացիաների

Ծիներ	Ցուցանիշները					Ցեղի ստանդարտի 1-ին դասի պահանջները
	N	Lim	M ± m	σ	C _v	
Լակտացիայի 305 օրվա կիթը, կգ						
1-ին ծին	16	3840...4716	4363±60,73	242,9	5,6	4200
2-րդ ծին	20	4576...6745	5406±118,2	528,7	9,78	4600
3-րդ ծին	22	5128...7215	6112±142,4	667,8	10,9	5000
Կաթում յուղի պարունակությունը, %						
1-ին ծին	16	3,9...4,1	3,97±0,02	0,07	1,8	3,6
2-րդ ծին	20	3,9...4,2	4,03±0,02	0,1	2,48	3,6
3-րդ ծին	22	3,9...4,2	4,0±0,02	0,1	2,5	3,6
Կաթում սպիտակուցի պարունակությունը, %						
1-ին ծին	16	3,2...3,3	3,22±0,01	0,04	1,2	3,2
2-րդ ծին	20	3,1...3,3	3,2±0,01	0,05	1,56	3,2
3-րդ ծին	22	3,2...3,3	3,24±0,01	0,05	1,5	3,2
Կաթնայուղ, կգ						
1-ին ծին	16	154...189	173,2±2,49	9,97	5,8	151
2-րդ ծին	20	192...270	217,9±4,26	19,04	8,74	165
3-րդ ծին	22	209...296	244,4±5,72	26,84	11,0	180
Կաթնասպիտակուց, կգ						
1-ին ծին	16	123...152	140,7±1,90	7,61	5,4	
2-րդ ծին	20	150...223	173,4±3,96	17,71	10,21	
3-րդ ծին	22	164...231	197,7±4,56	21,37	10,8	
Կաթնայուղ+կաթնասպիտակուց, կգ						
1-ին ծին	16	276...341	313,8±4,42	17,67	5,6	
2-րդ ծին	20	343...492	391,1±8,15	36,44	9,32	
3-րդ ծին	22	379...527	442,2±10,2	47,85	10,8	

Աղյուսակ 2-ում ներկայացված հոլշտին ցեղի կովերի տարբեր լակտացիաների կաթնային մթերատվության տվյալների (Գ.Հ. Գիլոյան և ուրիշ., 2013, 2014) վերլուծությունից ակնհայտ է կաթի քանակության փոփոխության տարիքային առանձնահատկությունը. ամենաբարձր կիթ՝ 6112 կգ ցուցանիշ գրանցվել է երրորդ ծնի կովերի մոտ, դրանք երկրորդ ծնի կովերին գերազանցում են 706 կգ-ով կամ 13,0 %-ով, իսկ առաջնածիններին՝ 1749 կգ-ով կամ 40,1 %-ով: Կաթում պարունակվող յուղի և սպիտակուցի քանակությունների տարիքային առանձնահատկությունն օրինաչափ է. հոլշտին ցեղի կովերը ցուցաբերել են կաթում յուղի պարունակության լավագույն ցուցանիշ՝ 3,97-4,03 %, սպիտակուցի քանակությունը կազմել է 3,2-3,24 %: Կաթնայուղ+կաթնասպիտակուցի քանակությամբ երրորդ ծնի կովերն առաջնածիններին գերազանցում են 128,4 կգ-ով կամ 40,9 %-ով: Երկրորդ և երրորդ լակ-

տացիաներում կաթնայուղ+կաթնասպիտակուցի քանակության փոփոխականության գործակիցը տատանվում է 9,32-10,8 %-ի սահմաններում, ինչը կարևորվում է սելեկցիոն ընտրություն կատարելիս:

Եզրակացություն

ՀՀ Կոտայքի մարզի «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ տնտեսությունում Գերմանիայից ներկրված հոլշտին ցեղի երինջների դուստրերից ստացված մաքրացել երկրորդ սերնդի կովերն արոտամսուրային պահվածքի պայմաններում երրորդ ծնում 305 օրվա կաթի քանակությամբ ցեղի ստանդարտի պահանջը գերազանցել են 1112 կգ-ով կամ 22,2 %-ով, ինչը պայմանավորված է տվյալ կենդանիների բավարար կլիմայավարժեցմամբ, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիայով նախրի նորոգման համար ընտրված մատղաշի աճեցմամբ:

Գրականություն

1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք. - Եր., 2018:
2. Գիլոյան Գ.Յ., Հովհաննիսյան Ա.Յ., Կասումյան Ն.Ա. Գերմանական սելեկցիայի շվից, ֆլեկֆի, հոլշտին ներմուծված ցեղերի առաջնածին կովերի կաթնային մթերատվությունը և ներունակության դրսևորման մակարդակը // Ագրոգիտություն. - N 5-6. - 2013. - Էջ 302-306:
3. Գիլոյան Գ.Յ., Հովհաննիսյան Ա.Յ., Կասումյան Ն.Ա. Ներմուծված ֆլեկֆի (սիմենթալ) ցեղի կովերի մթերատվության դրսևորումը կապված կլիմայավարժեցման հետ // Ագրոգիտություն. - N 11-12. - 2014. - Էջ 593-597:
4. Меркурьева Е.К. Биометрия в селекции и генетике сельскохозяйственных животных. - М.: Колос, 1970. - 280 с.
5. Инструкция по бонитировке крупного рогатого скота молочных и молочно-мясных пород. - М., 1990. - 21 с.

АННОТАЦИЯ**Возрастные особенности молочной продуктивности коров второго поколения, полученных от дочерей завезенных чистопородных нетелей голштинской породы**

С целью совершенствования скотоводства в РА предлагается использовать животных 2-го поколения, полученных от завезенных из Европы дочерей чистопородных нетелей голштинской породы.

Исследованиями, проведенными в 2017-2018 гг. в ОАО «Арзнийская племенная ПСС» в условиях пастбищно-стойлового содержания, установлено, что коровы 2-го поколения, рожденные от дочерей завезенных из Германии чистопородных нетелей голштинской породы, в третьем отёле по количеству молока за 305 дней превосходили требования стандарта породы на 1112 кг или на 22,2%, что свидетельствует о достаточной акклиматизации, а также о целевом выращивании молодняка, выбранного для ремонта стада по новейшей технологии.

ABSTRACT**Age-Related Characteristics of Milk Productivity in the Second Generation Bred from the Daughters of Imported Purebred Holstein Heifers**

In order to improve cattle breeding in Armenia, it is proposed to use animals of second generation bred from the daughters of purebred Holstein heifers imported from Europe.

The studies were conducted in 2017-2018 on the “Arzni Poultry, Cattle and Pig-Breeding” farm, OJSC under grazing and stall housing conditions. It was found out that the 2nd generation cows born from purebred heifers’ daughters imported from Germany, at the stage of the 3rd lactation have exceeded the requirements of the breed standard for 305 days’ milk amount by 1112 kg or by 22.2 % which evidences on sufficient acclimatization capacity, as well as on targeted breeding of the selected young replacement stock through innovative technologies.

Ընդունվել է՝ 11.03.2019 թ.
Գրախոսվել է՝ 18.03.2019 թ.